

ՀԱԱՀ «Հ.Պետրոսյանի անվան Հողագիտության, ագրոքիմիայի և
մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաձյուղ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

(ամփոփիչ)

«Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագրի
տարավագման հարթակի տարածքի հողերի հիմնական
տիպերի կառուցվածքի և ֆիզիկա-քիմիական կազմի գիտական
հետազոտություն»

Ծրագրի ղեկավար՝ գ.գ.դ.

Հ.Ղազարյան

Կատարողներ՝

Մելիորացիայի բաժնի վարիչ, գ.գ.դ.

Վ. Պապինյան

Գիտաշխատող

Ռ.Գրիգորյան

Ամուլսարը գտնվում է Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիսային հատվածում, որի շրջակա տարածքները մաս են կազմում Վայոց –Ձորի մարզի Գեղեվազ և Մարավան, Սյունիքի մարզի Գորհայք համայնքների վարչական տարածքներին:

Ուսումնասիրվող տարածքը, որը կազմում է 575հա, գտնվում է Գնդեվազ համայնքի վարչական տարածքում, Ամուլսարի ստորոտում, հիմնականում ունի հարավ-արևմտյան դիրքադրություն, տարածված է տարբեր աստիճանի թեքությունների և 2-3 աստիճան մեղմ հարթավայրային պայմաններում:

Տարածքի հողերի ձևավորման համար, որպես մայրատեսակներ ծառայել են հրաբխային ծագում ունեցող անդեզիտների, անդեզիտոդագիտների, տրախիտների, տրախիտադագիտների, բրեկչաների և տուֆոբրեկչաների , կոնգլոմերատների և էյուվիալ նստվածքների և դելյուվիալ բերվածքները, որոնք հանդես են գալիս հաճախ միախառնված:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գնդեվազ համայնքից 2.5-3կմ հեռավորության վրա՝ Վայք-Գնդեվազ մայրուղու աջ կողմում: Ռելեֆը կտրտված է, տարածքը բաժանվում է երկու մասի, միջին խորության ձորակով: Մայրուղու հարևանությամբ հարթ տարածություն է, որտեղ մշակվում են հացահատիկային մշակաբույսեր՝ հիմնականում /ցորեն/, իսկ տարածքի մյուս մասը զբաղեցված է այգիներով՝ ծիրան, ընկույզ և այլ պտղատու ծառատեսակներով:

Տարածքի դաշտային հետազոտություններից պարզվում է, որ այնտեղ տարածված են հիմնականում 2 հողատիպեր՝ լեռնային շագանակագույն և անտառային /հետանտառային/ դարչնագույն հողեր՝ մուգ շագանակագույն, շագանակագույն և անտառային դարչնագույն տիպիկ և կարբոնատային ենթատիպերով:

Շագանակագույն հողերը

Շագանակագույն հողերը ընկած են Վայք-Գնդեվազ մայրուղու աջ կողմում, հիմնականում հարթ տարածության վրա, որտեղ մշակվում են հացահատիկային մշակաբույսեր, իսկ մյուս մասը օգտագործվում են բազմամյա տնկարկների տակ:

Շագանակագույն հողերի տարածքում մեր կողմից դրվել է 4 հողափոսեր (1; 2; 7;17) և բազմաթիվ կիսահողափոսեր:

Ըստ կտրվածքների ուսումնասիրության 1-ին երեքը (1; 2; 7) շագանակագույն հողեր են, իսկ համար 17-ով բնորոշող հատվածը մուգ շագանակագույն հողեր են: Վերջինը առանձնանում է համեմատաբար հզոր հումուսային հորիզոնով, պրոֆիլի վերին հորիզոնի մուգ շագանակագույն գունավորումով, որը ստորին մասում փոխվում է գորշ շագանակագույնի:

Ստորև տրված են հողափոսերի նկարագրությունը

Հողակտրվածք 1 - դրված է Վայք- Գնդեվազ մայրուղուց 200մ հեռավորության վրա, շագանակագույն հող է, ցորենի դաշտ, որը ունի թույլ (մեղմ) թեքություն /2-3 աստիճան/ և հարավային կողմնադրություն:

A 0-22 սմ, շագանակագույն /խիտ արմատային մնացորդներով/ փուխր, թույլ արտահայտված հատիկակնձիկային ստրուկտուրայով, ծանր կավավազային մեխանիկական կազմով, խոնավ, անցումը աստիճանական:

AB – 22-46 սմ, բաց շագանակագույն, թույլ ամրացած, խոնավ, կոշտավոր ստրուկտուրայով, ծանր կավավազային մեխանիկական կազմով, կարբոնատային, անցումը աննկատ:

BC- 46-80սմ, բաց շագանակագույն /հարդագույն/, խոնավ, ամուր, ծանր կավավազային մեխանիկական կազմով, ստրուկտուրայից զուրկ, կարբոնատային, քարքարոտ, ցեմենտացած շերտը բացակայում է:

Հողակտրվածք 2 դրված է 1 հողակտրվածքից 800մ հարավ-արևմուտք, հողատարածքը օգտագործվում է որպես վարելահող, իսկ որոշ հատվածը՝ որպես բազմամյա տնկարկ:

A 0-25 սմ, շագանակագույն, փուխր, հատիկանման ստրուկտուրայով, բուսական արմատային մնացորդներով, թույլ խոնավ /թարմ/ ծանր կավավազային մեխանիկական կազմով, թույլ կարբոնատային, անցումը աստիճանական:

B 25-48 սմ, բաց շագանակագույն, թույլ խոնավ, ընկույզանման ստրուկտուրայով, ծանր կավավազային մեխանիկական կազմով, մանր քարերի առկայությամբ, կարբոնատային, անցումը հաջորդ հորիզոն նկատելի:

BC- 48-77 սմ, բաց շագանակագույն, ստրուկտուրայից զուրկ, խոնավ, ամրացած, կարբոնատային, միջին կավավազային մեխանիկական կազմով հորիզոն:

Հողակտրվածք 7 - դրված է համար 6 կտրվածքից 500մ հեռավորությամբ, հյուսիս-արևմտյան կողմնադրություն ունեցող 5-7⁰ թեքության վրա:

A 0-23 սմ, շագանակագույն, ճմապատված, թույլ խոնավ (թարմ), ծանր կավավազային մեխանիկական կազմով, հատիկային ստրուկտուրայով, թույլ քարքարոտությամբ, անցումը աննկատ:

B 23-48 սմ, բաց շագանակագույն, թույլ խոնավ, ընկույզանման ստրուկտուրայով, կարբոնատային, միջին կավավազային մեխանիկական կազմով, անցումը նկատելի:

Հողակտրվածք 17 - մուգ շագանակագույն հող է տարածված հարավարևմտյան կողմնադրությամբ 7-10⁰ թեքության վրա:

A_{1(K)} 0-11 սմ, հումուսակուտակման հորիզոն, մուգ շագանակագույն գույնով, թույլ ամրացած, ծակոտկեն, անկայուն կնձիկային ստրուկտուրայով, թույլ քարքարոտ, թույլ կարբոնատային, հորիզոնի անցումը նկատելի (ցայտուն):

A₂ 11-26 սմ, մուգ շագանակագույն դարչնագույն երանգով, ծակոտկեն, թույլ ամրացած, կնձկափոշեխառն ստրուկտուրայով, թույլ քարքարոտ, թույլ կարբոնատային, հորիզոնի անցումը նկատելի:

B₁ 26-41 սմ, շագանակագույն, թույլ ամրացած, նուրբ ծակոտկեն, անկայուն խոշոր կնձիկային ստրուկտուրայով, միջին քարքարոտ, եռում է աղաթթվից, անցումը հաջորդ հորիզոն նկատելի:

B_{2C_K} 41-71 սմ, բաց հարդագույն, փուխր մանրահողով, ծակոտկեն, անստրուկտուր, ուժեղ քարքարոտ, ուժեղ եռում է, անցումը նկատելի:

C_{2K} 71-96 սմ, հարդագույն հողմահարված մայրատեսակ, թեթև կավավազային մեխանիկական կազմով, ուժեղ կարբոնատային (բուռն եռում է աղաթթվից), ամրացած, ուժեղ քարքարոտ:

Ստորև բերվող աղյուսակում տրված են տվյալ հողափոսերից ըստ գենետիկական հորիզոնների վերցրած նմուշների ֆիզիկոքիմիական, քիմիական և ֆիզիկական որոշ հատկանիշներ:

Շագանակագույն հողերի ֆիզիկոքիմիական և քիմիական որոշ հատկություններ

Աղյուսակ Հողափոսի N ⁰ -ը, դիրքավորությունը, բարձրությունը մ	Հորիզոնների հզորությունը սմ	Հումուսը, %	Ընդհանուր N ⁰ -ը, %	PH ջրային	CO ₂ %	Կլանված կատիոններ, մգ/էկվ 100գ հողում					Մեխանիկական կազմ, ջրակայուն ագրեգատներ %			Մնդային տարրեր, մգ/100գ հողում		
						Ca ²⁺	Mg ²⁺	Na ⁺	K	գումարը	Ֆրակցիա < 0.001 մմ	Ֆրակցիա < 0.01 մմ	Ջրակայուն ագրեգատները	N	P ₂ O ₅	K ₂ O
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
1. Հարավային, կողմնադրություն, թեքության 2-3° 1690մ	A 0-22	4.5	0.23	7.0	չկա	33.0	18.0	1.2	1.8	54.2	17.7	55.6	53.1	5.3	3.6	100
	A B 22-46	3.2	0.11	7.3	3.0	35.0	15.1	0.5	2.0	52.6	16.0	50.0	56.4	5.5	4.2	80
	BC 46-80	1.2	0.08	7.4	4.3	36.5	24.4	0.5	1.0	62.4	21.3	47.3	43.3	4.2	3.3	39
2. Հարավային, կողմնադրություն թեքության 2-3° 1680մ	A 0-25	4.2	0.19	7.0	0.8	32.0	17.0	0.9	2.0	51.9	16.9	58.4	55.3	4.4	3.8	88
	B 25-48	2.7	0.122	7.3	4.4	38.5	14.1	0.5	1.8	54.9	17.8	51.0	54.1	4.0	3.2	73
	BC 48-77	1.0	0.1	7.4	3.9	36.0	20.2	0.4	2.0	58.6	19.3	44.0	47.7	3.8	3.0	40
7. Հյուսիս-արևմտյան, կողմնադրություն, 5-7° թեքության, 1640 մ	A 0-23	4.2	0.198	6.9	0.4	38.8	13.4	0.9	2.1	55.2	16.4	48.8	55.0	5.5	3.4	42
	B 23-48	2.8	0.11	7.3	3.9	41.4	10.3	0.5	2.2	54.4	17.3	44.0	49.0	3.8	3.0	40
17. Հարավ-արևմտյան, կողմնադրություն, 7-10° թեքության, 1821 մ	A ₁ 0-11	5.75	0.28	6.75	0.3	29.1	2.2	1.4	2.0	34.7	29.2	42.2	52.4	3.7	3.8	72
	A ₂ 11-26	5.60	0.23	6.85	1.1	28.8	3.0	0.7	1.9	34.4	25.3	42.1	50.8	3.0	4.0	60
	B ₁ 26-41	3.52	0.16	6.95	4.2	24.6	4.1	0.5	2.0	31.2	21.5	35.4	44.7	2.6	3.0	40
	B ₂ C ₁ 41-71	1.08	0.09	7.25	6.3	17.0	6.8	0.5	2.1	26.4	20.1	32.4	44.0	2.1	3.0	35
	C ₁ 71-96	0.55	0.04	7.40	5.1	12.5	11.0	0.4	2.0	25.9	23.2	38.9	40.2	14	2.5	40

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մշակովի շագանակագույն հողերը (կտրվածք 1, 2, 7) ունեն դիֆերենցացված հողային պրոֆիլ, հումուսի համեմատաբար ցածր պարունակություն, որը ըստ խորության նվազում է: Վերջին օրինաչափությունը նկատվում է նաև ընդհանուր N-ի քանակության բաշխման ժամանակ: Վերին հորիզոնը ունի չեզոք (PH-7,0) ռեակցիա, որը ըստ խորության փոխվում է թույլ հիմնային ռեակցիայի (PH-7,3-7,4): Ըստ խորության ավելանում է նաև կարբոնատությունը, հասնելով 4,3-4,4-ը /ըստ CO₂-ի/: Փոխանակային կատիոնների կազմում գերակշռում է Ca-ը, հասնելով 38,8-41,4 մգ էկվ/100գ հողում, Mg-ը տատանվում է 10,3-24,4 մգ էկվ-ի սահմաններում, որը համեմատաբար բարձր է մշակովի հողերում: Ինչպես կլանված Na-ը, այնպես էլ K-ը բարձր չեն:

Կլանված Na-ը գտնվում է թույլատրելի սահմանից ցածր մակարդակում: Մեխանիկական կազմը ծանր կավավազային է մշակովի տարածքներում, որը ըստ խորության թեթևանում է, անցնելով միջին և թեթև կավավազայինի: Տիղմային ֆրակցիաների քանակությունը ըստ խորության ավելանում է մշակովի տարածքներում հասնելով 21.3% (կտրվածք 1), իսկ ջրակայուն ագրեգատների քանակությունը ընդհակառակը պակասում է ըստ խորության:

Ուսումնասիրվող շագանակագույն հողերը, թույլապահովված են ազոտով, թույլից-միջին ֆոսֆորով և լավ ախահովված կալիումով:

Ուսումնասիրվող հողերը հումուսի պարունակությամբ ունեն հետևյալ պատկերը՝ առաջին կտրվածքով բնորոշվող հողերը 0-46 սմ շերտում պարունակում են 212.5 տ/հա հումուս, իսկ 48-80 սմ շերտում՝ 49.0 տ/հա, ընդհանուր քանակությունը 0-80 սմ շերտում կազմում է 261.5 տ/հա:

Երկրորդ կտրվածքով բնորոշվող հողերը՝ 0-48 սմ շերտում հումուսը կազմում է 198.7 տ/հա, իսկ 48-77 սմ-ում 33.6, հումուսի ընդհանուր պարունակությունը հավաստի 232.3 տ/հա:

Յոթերորդ կտրվածքով բնորոշվող հողերում, հումուսի քանակությունը 226.8 տ/հա է, իսկ 17-րդ կտրվածքում այն հավասար է 306.8 տ/հա:

Այսպիսով, շագանակագույն հողերում, հումուսային հորիզոններում առկա է 218.4-306.8 տ/հա հումուս, ուստի հանքերի շահագործումից առաջ, անհրաժեշտ է 0-50 սմ և 0-80սմ հողաշերտերը, ըստ կտրվածքների համապատասխանության պահեստավորել և այն օգտագործել ռեկուլտիվացիայի ժամանակ:

Լեռնային անտառային դարչնագույն (հետանտառային) հողեր

Ամուլսարի շրջակա տարածքում անտառային դարչնագույն հողերը ձևավորվել են Արփա գետի ձախափնյա մասում և հանդիպվում են նաև Գնդեվազ համայնքի տարածքում, որոնք սահմանակից են սևահողերին և շագանակագույն հողերին:

Անտառային դարչնագույն հողերը առաջացել են տարբեր մայրական ապարների հողմահարված փխրուկի և էյուվիալ-դեյուվիալ բերվածքների վրա (ապարները՝ կոնգլոմետաղներ, պորֆիրիտներ, կրաքարեր, անդեզիտներ, անդեզիտոդացիտներ, տուֆոբրեկչիաներ):

Ուսումնասիրվող տարածքի հողերը զարգանում են բարդ կտրտված ռելեֆի պայմաններում, որտեղ նկատվում է խիստ էրոզացված, ուժեղ հողատարված մայրական ապարների համատարած էլքերով առանձին տարածքներ:

Անտառային դարչնագույն հողերը առանձնանում են միջին և հզոր հումուսային հորիզոնով, որտեղ նկատելի է ըստ խորության հումուսի քանակի աստիճանական նվազումը, կավավազային մեխանիկական կազմով, դարչնագույն գունավորմամբ, հողի վերևի հորիզոններում լավ արտահայտված հատիկակնձիկային (ընկույզանման) ստրուկտուրայով, չեզոքից թույլ հիմնային ռեակցիայով:

Ուսումնասիրվող տարածքում դրվել է 5 հողափոս և բազմաթիվ կիսահողափոսեր:

Ստորև բերվում է ուսումնասիրված տարածքի հողափոսերի նկարագրությունը ըստ գենետիկական հորիզոնների:

Հողակտրվածք 3. - դրված է ձորի ձախ կողմում, հողակտրվածք 1-ից 1300մ հեռավորության վրա, թեք լանջի, արևմտյան դիրքադրությամբ, 7-10⁰ թեքության վրա, տափաստանացված հող է, օգտագործվում է որպես արոտավայր:

A-0-20սմ – մուգ դարչնագույն, փուխր, հատիկային ստրուկտուրայով, բուսական արմատային մնացորդներով, ծանր կավավազային մեխանիկական կազմով, ծակոտկեն, կրագուրկ թույլ խոնավ, անցումը աննկատ:

B-20-72սմ - դարչնագույն, խոնավ, ամրացած, միջին կավավազային, ընկույզանման-կոշտավոր ստրուկտուրայով, քարքարոտ, անցումը նկատելի:

Հողակտրվածք 4. - դրված է 3-րդ հողակտրվածքից 300մ հեռավորության վրա, արևմտյան կողմնադրության, թույլ թեքությամբ / 5-7⁰/ էրոզացված լանջի վրա:

AB-0-32սմ - բաց դարչնագույն, քարքարոտ, թույլ խոնավ, ծանր կավավազային մեխանիկական կազմով, անցումը նկատելի:

BC-32-42սմ - բաց դարչնագույն, խճաքարային շերտ, միջին կավավազային մեխանիկական կազմով, անցումը նկատելի:

Հողակտրվածք 5. - դրված է N 3 հողակտրվածքից 900մ ներքև, արևմտյան դիրքադրության, 3-5⁰ թեքությամբ դաշտ է, ցանված է առվույտ և ոռոգվում է:

A-0-32սմ – մուգ դարչնագույն, ճմապատված հորիզոն, թույլ խոնավ, ծանր կավավազային մեխանիկական կազմով, հատիկակնձիկային ստրուկտուրայով հորիզոնի անցումը աննկատ:

AB-32-56սմ - դարչնագույն, խոնավ, ծանր կավավազային մեխանիկական կազմով, մանր քարերի առկայությամբ, ընկյուղանման ստրուկտուրայով, թույլ կարբոնատային, անցումը աննկատ:

BC-56-90սմ – բաց դարչնագույն, մանր քարերի առկայությամբ, խոնավ, կավային մեխանիկական կազմով, կոշտավոր ստրուկտուրայով:

Հողակտրվածք 6. - դրված է N 5 հողակտրվածքից 700մ հեռավորության վրա, հարավ-արևմտյան ուղղությամբ, 5-7⁰ թեքության վրա, ցորենի դաշտում:

A-0-22սմ – մակերեսից բաց դարչնագույն, մանր հատիկանման ստրուկտուրայով, թույլ էրոզացված, թույլ խոնավացած, ծանր կավավազային մեխանիկական կազմով, անցումը՝ աննկատ:

B-22-48սմ - բաց դարչնագույն գորշ երանգով, ամրացած, քարքարոտ, թույլ արտահայտված ստրուկտուրայով, ծանր կավավազային մեխանիկական կազմով հորիզոն, անցումը՝ աննկատ:

BC-48-93սմ – բաց գորշավուն, հարդագույն երանգով, ամրացած, քարքարոտ, թույլ խոնավ, կոշտավոր ստրուկտուրայով, ծանր կավավազային մեխանիկական կազմով:

Հողակտրվածք 8. - դրված է N 6 հողափոսից 600մ դեպի արևմուտք, արևմտյան կողմնադրության 7-9⁰ թեքության լանջի վրա:

A-0-26սմ – դարչնագույն, ճմապատված, թույլ քարքարոտ, ծանր կավավազային մեխանիկական կազմով, հատիկակնձիկային ստրուկտուրայով, թույլ կարբոնատային, անցումը՝ աստիճանական:

B-26-45սմ – բաց դարչնագույն, ընկյուղանման ստրուկտուրայով, միջին կավավազային մեխանիկական կազմով, թույլ քարքարոտ, թույլ խոնավ, անցումը՝ նկատելի:

Այսպիսով՝ ուսումնասիրված դարչնագույն հողերը առանձնացվում են մակերեսից մուգ դարչնագույն, ծանր կավավազային, խորը շերտերում միջին կավավազային մեխանիկական կազմով, թույլ կարբոնատությամբ, հզոր և միջին հումուսային հորիզոններով, տափաստանացված հողեր են, որոնք օգտագործվում են ինչպես հացահատիկային մշակաբույսերի, այնպես էլ այգիների, իսկ մեծ մասը խոտհարքների և արոտների տակ:

Աղյուսակում բերված են տվյալ տարածքի հողերի ֆիզիկոքիմիական և քիմիական որոշ հատկանիշները:

Անտառային դարչնագույն, տափաստանացված հողերի ֆիզիկոքիմիական և քիմիական որոշ հատկություններ

Հողափոսի N ^o -ը, դիրքադրությունը, թեքության աստիճանը, բարձրությունը	Հորիզոնների հզորությունը սմ	Հումուսը, %	Ընդհանուր N ^o -ը, %	PH ջրային	CO ₂ %	Կլանված կատիոններ, մգ/էկվ 100գ հողում					մեխնիկական կազմ, ջրակայուն ագրեգատներ, %			Սննդային տարրեր, մգ/100գ հողում		
						Ca ²⁺	Mg ²⁺	Na ⁺	K	գումարը	Ֆրակցիա < 0.001 մմ	Ֆրակցիա < 0.01 մմ	Ջրակայուն ագրեգատներ	N	P ₂ O ₅	K ₂ O
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
3. Հյուսիս-արևմտյան, կողմնադրության, թեք. 7-10°, 1780 մ	A 0-20	4.2	0.24	7.4	3.6	29.7	10.8	1.2	2.0	43.7	6.5	48.8	55.6	3.7	2.4	42
	B 20-72	2.40	0.11	7.3	5.2	33.2	13.9	0.5	1.4	49.0	6.2	44.0	50.0	3.5	1.2	40
4. Արևմտյան, կողմնադրության, թեք. 5-7°, 1770 մ	AB 0-32	4.2	0.195	7.3	4.0	28.0	13.0	0.9	1.6	43.5	7.5	53.6	54.4	4.1	2.7	44
	BC 32-42	2.0	0.115	7.4	5.5	25.5	10.4	0.5	2.0	38.4	7.0	42.0	47.8	3.8	1.6	40
5. Արևմտյան, կողմնադրության, 3-5 ^o , 1640 մ	A 0-32	4.53	0.296	7.5	1.8	47.2	11.9	1.1	2.3	62.5	8.1	60.6	48.9	5.1	4.5	83
	AB 32-56	2.20	0.124	7.4	2.3	50.1	7.3	0.7	2.0	60.1	7.3	55.0	58.0	4.0	0.9	63
	BC 56-90	0.85	0.09	7.4	4.7	31.1	20.8	0.5	2.1	54.5	10.6	48.8	50.4	4.0	0.9	44
6. Արևմտյան, կողմնադրության, 5-7 ^o , 1660 մ	A 0-22	4.70	0.24	7.3	2.2	40.1	20.8	0.5	1.1	62.5	8.0	62.2	51.0	4.9	2.6	71
	B 22-48	2.30	0.136	7.2	4.8	39.9	8.8	1.2	2.2	49.9	8.8	56.8	53.8	3.8	2.7	48
	BC 48-93	0.8	0.11	7.3	5.2	42.4	7.2	0.5	1.0	51.1	12.4	50.0	47.3	3.0	0.3	41
8 Արևմտյան, կողմնադրության, 7-9 ^o 1825 մ	A 0-26	3.5	0.215	7.1	1.7	40.5	11.6	0.7	2.2	55.0	7.1	52.4	57.8	5.0	4.1	39
	B 26-45	2.8	0.140	7.3	4.2	39.6	13.8	0.5	2.0	55.9	7.8	43.0	50.1	4.3	3.6	40

Աղյուսակում բերված տվյալները (աղյուսակ 2) ցույց են տալիս, որ հետազոտված տարածքի հողերը բնութագրվում են ըստ միջավայրի ռեակցիայի չեզոքից – թույլ հիմնային ռեակցիայով (PH-7-7,4), մակերեսից կարբոնատների ցածր պարունակությամբ:

Հողի կլանման ծավալը, կախված հողի մեխանիկական կազմից տատանվում է 38-62,5 մգ/էկվիվալենտի 100գ հողում:

Մշակովի հողերում այն հասնում է 55-60 և ավելի մգ/էկվիվալենտի 100գ հողում, որը ըստ խորության պակասում է, նվազելով մինչև 40-42մգ/էկվ:

Հողի կլանման ծավալում փոխանակային Ca-ն գերակշռում է Mg-ին, հասնելով 60-65%-ի, որոշ հողակտրվածքներում՝ (կտր. 5), մինչև 75,5%-ի, փոխանակային Na-ի և K-ի քանակությունները ցածր են:

Հումուսի պարունակությունը հողի վերին A հորիզոնում տատանվում է 4,0-4,7%-ի սահմաններում, կախված հումուսի պարունակությունից, ցածր է նաև ընդհանուր ազոտի քանակությունը, որը տատանվում է 0,2-0,1%-ի սահմաններում:

Ֆիզիկական կավը հողի վերևի շերտերում հասնում է 55-60%-ի, որը ըստ խորության պակասում է: Նշված հողերում ցածր է տիղմային ֆրակցիաների (<0,001մմ) քանակը, որը տատանվում է 6-12%-ի սահմաններում:

Մանդային տարրերի ապահովվածությունը անտառային դարչնագույն և շագանայագույն հողերում ունի հետևյալ պատկերը՝ ազոտով թույլ, ֆոսֆորով թույլից-միջին և կալիումով – լավ:

Հաշվարկները ցույց են տվել, որ կտրվածք 3-ով բնորոշվող հողերում հումուսի քանակությունը կազմում է 0-72սմ շերտում 265.2 տ/հա, կտրվածք 4-ում՝ 312.8 տ/հա, 5-րդ՝ 246.4 տ/հա, 6-րդ՝ 226.8 տ/հա, իսկ 8-րդ կտրվածքով բնորոշվող հողերում 184.3 տ/հա է:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հանքերի շահագործումից առաջ նշված տարածքների վերևի հորիզոնների հողաշերտերը պետք է հավաքել և պահեստավորել, հետագայում ռեկուլտիվացիայի նպատակներով օգտագործելու համար:

